ՁԵՌԱԳՐԱԿԱՆ

ՁԵՌԱԳԻՐ ԱՒԵՏԱՐԱՆ ՄԸ Ի ԲՈՍՏՈՆ

ՆԿԱՐԱԳՐՈՒԹԻՒՆ

Թուղթ՝ 302 [604 էջ]: Պրակ՝ 34: Չաւալ՝ 27·8×18·6×7 սմ.: Նիւթ՝ թուղթ: Կազմ՝ դրոշմազարդ կաշեպատ տախտակ՝ խաչազարդեալ: Պահպանակի՝ սկիզբը՝ երկու հատ, գրուած Մեսրոպեան երկաթագրով, բովանդակութիւնը Աւետարանէն է (Ղուկաս Ը 47 – Թ 40): Ձեռագրի վերջաւորութեան պատռուած պահպանակի մը հետքը կը տեսնուի: Հանգամանք՝ յոյժ լաւ. էջ 302ար մեծաւ մասամբ պատռուած է եւ անհետ կորած. իսկ մատեանի վերջաւորութեան կան չորս այլ պատռուած թերթեր, որք ի սկզբանէ հաւանաբար դատարկ եղած են: Գրութիւն՝ երկսիւն: Դատարկ թուղթ՝ 1, 2, 3, էջ 4ա, 5բ, 6ա, 7բ, 8ա, 9բ, 10ա, 11բ, 12ա, 13բ, 16ա, 17ա, 95բ, 96ա, 145ա, սիւնակ բ, 146բ, 147ա, 230, 231ա: Տող՝ 19, 20, 21, 22, 23: Գծում՝ ճնշումով: Բառանջատում՝ չիք: Գիր՝ բոլորգիր: Թանաք՝ սեւ. գլխագրեր, խորագրեր եւն. գրուած են կարմիր թանաքով:

ՁԱՐԴԱՐԱՐՈՒԹԻՒՆՔ

ա. Թուշնագիրք եւ ծաղկագիրք կը սկսին երեւիլ էջ 18աէն մինչեւ 300բ՝ գրեթէ ամէն էջի վրայ:

բ. Լուսանցազարդք նոյնպէս յաճախակի կը հանդիպին էջ 4բէն մինչեւ էջ 300բ:

գ. Խորանք՝ էջ 4բ և 5ա, կարմիր ու հատ գիծերով կազմուած սիւներ, որոնց մէջ կայ բացատրութիւն յառաջիկային տրուելիք Աւետարաններու համաբարբառին մասին: Վերի մասին մէջտեղը, կիսաշրջանակի մէջ կ'երեւին երկու աւետարանիչներ՝ ձեռքերնին թուղթ, իսկ շրջանակին շուրջը կան ծաղկագրութիւններ, որոնք եղերուած են կարմիր գծերով. սիւներուն դուրսի ու վրայի կողմերը կան թուշնագրեր: էջ 6բ եւ 7ա, 8բ եւ 9ա, 10բ եւ 11ա, 12բ եւ 13ա՝ խորանք աղիւսակաց: Կիսախորանք՝ էջ 18ա, 96բ, 148ա, 232ա, իւրաքանչիւր Աւետարանի սկզբնաւորութեան: Մանրանկարք՝ էջ 16բ, Քրիստոս՝ բազմած գահու մը վրայ, աջ ձեռքով կ'օրհնէ, իսկ ձախով Աւետարան մը բռնած է. հագած է կապոյտ պարեգօտ մը, որուն վրայէն մանիչակագոյն կամ դոց կապոյտ վերարկու մը: Ներկայացուած է բոկոտն, կարմրագոյն պատուանդանի մը վրայ: Ստորեւ՝ աջ կողմը՝ կ'երեւի ցուլ մը, իսկ ձախին առիւծ մը: Քրիստոսի թիկունքին՝ աջ կողմը կայ հրեշտակ մը, իսկ ձախ կողմը՝ արծիւ մը: Վերոյիշեալ անասունները ամենեքեան բռնած են կարմրագոյն գրքեր, որպէս խորհրդանշան չորս Աւետարաններուն եւ աւետարանիչներուն: Քրիստոսի նկարին վերեւ հրեշտակ մը բռնած է կտաւեայ պատառ մը: էջ 17բ. Մատթէոս Աւետարանիչ ներկայացուած է նստած վիճակի մէջ եւ գրելով զբաղած: Աջին կայ ձուկ մը, գլուխն ի վայր, որուն

digitised by A.R.A.R.@

պոչին վրայ կ'երեւի թուղթ։ Մանրանկարին ձախ կողմը կը տեսնուի զմբեթազարդ չէնք մը, իսկ աջին՝ սիւնազարդ չէնք մը։ էջ 96բ. Մարկոս Աւետարանիչ՝ նստած կը գրէ ամպհովանիի նման կառոյցի մը ներքեւ։ աջին կայ սիւնազարդ ու գմբեթածածկ չէնք մը։ էջ 147բ. Ղուկաս Աւետարանիչ նըստած՝ ձախ ձեռքով բռնած է Աւետարան մը, իսկ աջը երկարած է գլխիվայր կախեալ ճկան մը։ Աւետարանչի ետին՝ ձախ կողմը, կայ սիւնազարդ կառոյց մը։ էջ 231բ. Յովհաննէս Աւետարանիչ՝ նկարին ձախ կողմը՝ յոտնկայս կ'ընդունի աստուածային պատգամը զԱստուած խորհրդանշող աջէն, եւ կը փոխանցէ զայն իր աշակերտ Պռոխորոնին, որ նստած է Յովհաննէսի աջ կողմը ու կը գրէ։ Սոյն մանրանկարներուն մէջ տիրական են կապոյտ, կանաչ ու կարմիր գոյները։ Գրիչէ՝ չէք։ Միակ յիշատակարանը մեծաւ մասամբ կորած է թուղթ 302բ մէկ կարեւոր մասին կորուստն պատճառով։ Ստացող՝ չէք։ Ծպկող՝ չէք։ Կազմող՝ չէք։ Նորոգող՝ չէք։ Ժամանակ՝ որեւիցէ յիշատակութիւն չկայ։ Ուշ ժամանակի գործ կը թուի ըլլալ։ Այս է նաեւ կարծիքը նշանաւոր արուեստագէտ Արշակ Ֆէթվաճեանի, որ տարիներ առաջ առիթն ունեցած է տեսնելու այս ձեռագիրը, եւ բերանացի յայտնած է իր տպաւորութիւնը գրքին տիրոջ։ Տեղի՝ անյայտ։ Սեփականատէր՝ Ասատուր Արզումանեան, եւ Երկանեան ընտանիք է Ուսթ Ռաքսբրրի, Բոստոն։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Աւետարան։

էջ 4բ – 5ա [Ա]մոնքի Աղէքսանդրացւոյ բազում աշխատութիւն և ճշդրտիւ փոյթ ի մէջ առեալ զառ ի չորից ելեալ մեզ զաւետարանն մաթեն [= Մատթեան] աւետարանին՝ զհամաբարբառս այլոց աւետարանչացն զդրուակս եդեալ առնթեր միմեանց։ ... թէ քանիերորդ և որք իցեն ասացեալք, և որոց այլոց աւետարանչացն՝ որք ի կանոնին իցեն՝ զոր թիւ և ունիցիս առ ընթերակացացն, խնդրեսցես զնա ի ներքս յանձնիւրան յիւրաքանչիւր աւետարանի ի տեղի հանգոյն ասացեալս նոցա. ողջ լեր ի տր։

էջ 6բ կանոն ա յորս չորեսին թիւսն ած ան

էջ 7ա կանոն բ յորս երեքն յորս երքն [sic]

էջ 8բ կանոն երեք յորս երեքն յորս երեքն

էջ 9ա կանոն դ յորս երեքն կանոն է յորս երկուն

էջ 10բ կանոն ե յորս երկուն կանոն զ յորս երկուն

էջ 11ա կանոն է յորս երկուն կանոն ը յորս երկուն

էջ 12բ կանոն [թ] յորս երկուն կանոն ժ յոր առանձին

էջ 13ա կանոն ժ յորս առանձին

էջ 14ա Գլուխք Մաթէոսի Աւետարանչին. վասն մոգոցն ... վասն խնդրելոյ զտրունական մարմինն կը։ էջ 15բ։

էջ 18ա Աւետարան ըստ Մաթէոսի. Գիրք ծննդեան Ցի Քի որդոյ

digitised by A.R.A.R.@

Դուրթի ... ահաւասիկ ես ընդ ձեզ եմ զամենայն աւուրս մինչև ի կատարած աշխարհի։ էջ 93բ։

... էջ 93բ [Ն]ախադրութիւնք Մարկոսի Աւետարանին։ [Ա]ւետարանս որ ըստ Մարկոսի գրեալ է ոչն Մարկոս աշակերտ Պետրոսի և ընթացակիցք Պաւղոսի գրեաց զաւետարանս զայս ...։

էջ 94ա [Մ]արկոս հրամանաւ Պետրոսի վիմի գրեաց զաւետարանս ի յԱլէքսանդրի քաղաքի ի լեզու եգիպտացի զկնի հնդեասան ամի համբառն[ալ]ոյ փրկչին։ ... [Մ]արկոս բարձր պատուար կամ ի վերայ տանեցն [գ]լուխք աւետարանին որ ըստ Մարկոսի, Ղուկասու, Յովհաննու, Մատթէոսի։

էջ 94բ Մրկս գլխոյն համ վան դիւահարին ... վս խնդրելոյ զարնուական [sic] մարմինն։ էջ 95ա։

էջ 97ա Աւետարան ըստ Մարկոսի. սկիզբն աւետարանի Ցի Քի որդո Այ որպէս և գրեալ է ի մարգարէս ... և իբրև լուան՝ ելին և փախեան ի գերեզմանէն, քանզի զահի հարեալ էին, և ոչ ումեք ինչ ասացին զի երկնչէին։

էջ 145բ Սկիզբն գլխոց աւետարան[ին] Ղուկասու. վասն աշխարհագրին ... վասն համբառնալոյն տն ձդ։ էջ 146ա։

էջ 148ա Աւետարան ըստ Ղուկասու. Քանզի բազումք յաւժարեցին վերստին կարգել զպատմութիւնն վասն իրացն հաստատելոցն ի մեզ ... և էին հանապազ ի տաճարին, գովէին և աւրհնէին զած։ էջ 229ա։

էջ 229բ Վասն զի անսկիզբն է Ած ... վասն սիրելոյ աշակերտ և գրելոյ զաւետ. խգ։

էջ 232ա Աւետարան ըստ Յովհաննու. Ի սկզբանէ էր բանն, և բանն էր առ Ած, և Ած էր բանն ... Բայց է և այլ ինչ բազում զոր արար Ցս զոր եթէ գրեալ էր մի ըստ միոջէ, կարծեմ թէ և ոչ աշխարհս բաւական էր տանել զգիրսն որ թէ գրեալ էին։ էջ 301բ։

ՑԻՇԱՏԱԿԱՐԱՆՔ

էջ 302ա, և 302բ

Աւրհնեալ է ամենասք երրորդութիւն, հայր և որդի և հոգի, անբաժանելի՝ անձնաւորութեամբ համագոյ, իսկական էութեամբ, փառակից, գերբարձն գերակայութեամբ, համազաւր, անքննելի իշխանութեամբ. անձամբ յատկացեալ և անքակ միացեալ, մի արարչութեամբ, ի յերիս բաժանեալ անուամբ, և անորոշ մնացեալ միշտ և անայլայլելի բնութեամբ, որ ի վեր ես քան զամ տեսութի մտաց և հեռացեալ յամ տեսութեց եղելոցս. յամ պատճառ էիցս, յիմանալեաց և ի բանականաց, և յամ գոյեղինացս։ Եւ վասն զի քո հրամանաւդ չարժին ամ էակքս ի լինելութի ըստ սահմանագիր արարչութեն քո, դու կառուցեր զամ գոյքս ըստ անքաւ ողորմութեն քո, և բանիւ զաւրութիւդ հաս[տա]տեալ կան,

digitised by A.R.A.R.@

զք[եզ օր]հնեն վերն ... սք իման ... ամս ... նդեան յաւիտենի հոգւոյ բղխման իւր էակցի, որ զաւր[ութիւն] ետ տկարիս, կ[արողութիւն] ինձ թ ... զա ... : Էջ 302բ — ..[ո]ռոգեաց զդրախ[տ] երկրի. զբանակ ... սաքեալ հոգի ... նիւթեա բն .. տ տապ ... չա ի ժառանգ յաւիտենի դու անկեցրի տունկ տենչալիր, անմահական պտղով ի լի զոր ճաշակեն դասք Սիոնի, և լիանան ընթերցմամբ բանի. զոտ սատացար յարդար գոյի ի ... բակոց հալալ ընչի՝... ուուն սուրբ ... անուանի ... ակի,

ԳՐԻԳՈՐ ՄԱԳՍՈՒՏԵԱՆ

Նիւ Եորք

---

digitised by A.R.A.R.@